№ 215 Դեկտեմբերի 3 (15) 1880 Դեկտեմբերի 3 (15) № 215

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաբնակներին ուղարկում են աղդսվի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն ինչում։

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՈԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Գելիեսան և Բանասիրական, VIII Ցայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 բուբլ, կէս տարվան 6 բ., հինգ ամ. 5 բ., չորս ամ. 4 բ., երեք ամ. 3. բ. երկու ամ. 2 բ. և մի ամ. 1 բուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրթութեան գործ։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Երեւանից։ Ներքին լուրեր։— Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Ցունաստան։ «Русскій Курьеръ» լրագրի թղթակցութիւնը։ Գերմանիա։ Նամակ Գերմանիայից։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Ցայտարարութիւններ։

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

—

Ներկայ համարում տպված Կ. Պոլսի մեր մի նոր թղթակցի նամակը հետեւեալ խորհրդածութիւններ է ծնեցնում մեր մէջ։

Ակդրունքով Կ. Պոլսի երեք ընկերութիւնների միանալը օգտաւէտ և միանդամայն անհրաժեշտ գործ էր, բայց երեւում է որ այդ նոր „Միացեալ Ընկերութեան" գործադիր ժողովի անդամները դեռ ևս լաւ ծանօթ չեն Հայաստանի բարոյական պահանջների հետ, գոնէ այնքան ծանօթ չեն, որքան ծանօթ էին թէ „Բարեսէր" և թէ „Դիպրոցասիրաց" ընկերութիւնների անդամները։ Եթէ ոչ, ի՞նչպէս բացատրել այն, որ այժմեան ընկերութեան վարչութիւնը արգելում է Վանի շրջակայ գիւղերից վեր առնել գիւերօթիկ աշակերտներ Վանի վարժապետանոցի մէջ, արգելում է Հայաստանի այլազգի դաւակներից աշակերտ ընդունել ընկերութեան դպրոցների մէջ։

Մինչև որ վարժապետանոցը կը պահի սաներ միայն քաղաքի ընակիչների դաւակներից, գիւղերը երբէք չեն ունենայ վարժապետներ։ Հարկաւոր է որ իրանք գիւղացի պատանիներ պատրաստվեն որպէս ուսուցիչներ վարժապետանոցի մէջ, որպէս զի ժամանակով ընկերութեանը պատկանող գիւղական դպրոցները իրանց սեփական ուսուցիչներ ունենան։ Բաղաքի բնակիչը երբէք գիւղ չի գնայ։

Երկրորդ կարևոր խնդիրը Հայաստանի այլազգիների մէջ կրթութեան տարածելն է։ Արդեօք ի՞նչ է ընկերութեան նպատակը. միայն հայերի թէ առհասարակ Հայաստանի մէջ ուսում տարածելը։ Եթէ նրա նպատակն է ամբողջ Հայաստանի մէջ ուսում տարածելու, այն ժամանակ ընկերութիւնը պէտք է ամեն ջանք գործ դնի զրաւել իր դպրոցների մէջ քիւրդ, աղուանի և հայաստանցի այլ ցեղերի զաւակներին։ Արանք կրթվելով ընկերութեան դպրոցներում, ուսում աւարտելուց յետոյ, իրանց կողմից կը սկսեն տարածել ուսում իրանց վայրենի դաւանակիցների մէջ։

Ժամանակ է հասկանալ որ Հայաստանի հայերին միայն կրթելով, իսկ միւս հայաստանցիներին անխնամ և վայրենի թողնելով, մենք երբէք չենք ապահովացնի հայերին նրանց շրջապատող վայրենի ցեղերի բարբարոսութեան և հարստահարութիւնների դէմ։ Նոյն իսկ հայերի օգուտը աչքի առջև ունենալով պէտք է ամենամեծ ջանք գործ դնել հայաստանցի այլազգի ցեղերի վրա քաղաքակրթութեամբ ներգործելու։

Հայը իր ամբողջ պատմութեան մէջ միշտ զուրկ է եղել պրօպագանդայի ոգուց, միշտ իրան շրջապատելիս է եղել մի նեղ չինական պատով։ Ցաւալի է որ այդ սխալ ճնաակար, ազգակործան ընթացքին կամենում է հետևել այժմ և „Միացեալ Ընկերութիւնը։"

Մեր կարծիքով, ընդհակառակն, պէտք է աշխատել ընկերութեան դպրոցներում աշակերտների մեծամասնութիւնը այլազգիներից ընդունել և փոքրամասնութիւնը միայն, որպէս խմոր, բուն հայերից և այդ այլազգիներին աշխատել հայացնել լեզուով և ոգով, ի հարկէ չը դիպչելով նրանց կրօնին, որովհետև դա Միացեալ Ընկերութեան գործը չէր կարող լինել, այլ մի հայոց միսիոնարական ընկերութեան գործ է։

Ցոյս ունենք, որ Միացեալ Ընկերութեան վարչութիւնը կը հասկանայ մեր միտքը և այսպէս էլ կը գործի ապագայում։

Կրթութիւնը պէտք է տարածել ամբողջ Հայաստանում, բայց մանաւանդ Հայաստանցի այլազգի ցեղերի մէջ, որոնք եթէ անկիրթ մնան, ինչքան էլ քաղաքակրթված լինեն իրանք հայերը, միշտ սպառնալի, ոչնչացնող դժ կը ներկայացնեն հայերի համար։

Կրթել հայերին, իսկ այլազգիներին թողնել անխնամ, վայրենի և անկիրթ, — կը նշանակէ ջուր մաղել կը նշանակէ ապարդիւն գործ կատարել, կը նշանակէ կրթել հայերին և դաձեալ զոհ թողնել նրանց անկիրթ և վայրենի դրացիների ձեռքում։

Ցանկալի է, որ Կ. Պոլսի ընկերութեան վարչութեան անդամները աւելի զարգացած, աւելի հակացող մարդիկ լինէին և աւելի ծանօթ լինէին թէ կրթութեան ժամանակակից գաղափարների և թէ Հայաստանի պահանջների հետ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 21-ին

Մեր լրագրութիւնը չատ հարցեր է արծարծում, չատ խնդիրների վրա է խօսում, միայն մի խնդիր անուշադիր է մնում,—դա՝ հայկական բարբառների, դիալէկտների ուսումնասիրութեան կարևորութիւն է, որի մասին ես կամենում եմ այս նամակումս մի խօսք ասել։ Բարբառների այդ ուսումնասիրութեան վրա ես նայելու եմ բառագիտական կողմից։

Անհերքելի ճշմարտութիւն և անուրանալի փաստ է, որ մի որ և է ժողովրդի բարբառը, մի ազգի լեզուն հարստանում, ճոխանում է նրա մտաւոր զարգացման հետ. ուստի, գիտութիւնները ճիւաւորվելու հետ ստեղծվում են նոր արմատական բառեր, արհեստները կատարելագործելու հետ առաջ են գալիս նոր գիտական տերմիններ և այլն։ Հայոց մտաւոր զարգացումը կանգնած էր իր ամենաբարձր աստիճանի, ապոգէի վրա հինգերորդ դարում. այնուհետև նա ընկաւ, ընկաւ կամաց կամաց և գրաբար լեզուն, որով արտայայտվում էր նոյն դարի հայի մտաւոր զարգացման չափը. իսկ այժմ ով կարող է հակառակվել, որ հայը զանազան պատմական հանգամանքների ներքին չէ սկսել մտաւորապէս զարգանալ, ընդունելով սորա համար մի այլ միջոց՝—ազգի ամեն դասակարգին հասկանալի աշխարհաբար լեզուն։ Այս աշխարհաբար լեզուն սի որ և իցէ գրուածք ձեռնարկելու, մի որ և իցէ միտք արտայայտելու համար գիւղատնտեսութեան, երկրագործութեան, բուսաբանութեան և այլ գիտութիւնների վերաբերութեամբ, ամենքը կը խոստովանվին, այնքան աղքատ է դեռ ևս, որ այս դէպքում հարկաւոր է դիմել մեր գրաբար լեզուի բառարանին և այնտեղից արմատական բառեր ժողովել։ Բայց միթէ նոյն իսկ այդ բառարանը կարող է բաւականութիւն տալ այդպիսի մի միտք ունեցողին։—Ո՛չ։ Եւ ահա ինչու։

Ո՞վ կարող է հակառակվել այն մտքին, որ հայի մտաւորութեան եղանակը, ձեր դարերի ընթացքում փոխված չէ. ուրեմն և նա չէ ստեղծել նոր բառեր հասկացողութիւն տալու համար կեանքի մէջ եղող կան-կարասիքի, իրերի, գործիքների, զարդարանքների և այլ պատկանելիքների մասին։ Ո՞վ չի խոստովանվի, որ այս ինչ և այն ինչ հայ գաւառական գիւղացիները երկրագործութեան վերաբերութեամբ ունեն առանձին առանձին տերմիններ գործիքների, հողերի կազմութեան, դաշտային բոյսերի տեսակների համար և այլն։ Ո՞վ չի համոզվի, որ աշխարհի այս և այն կողմը ցրված հայերը կենդանաբանութեան, բուսաբանութեան, բժշկականութեան, վաճառականութեան և բազմատեսակ արհեստների վերաբերութեամբ ունեն իրանց սեպհական, երբեմն բուն հայկական և երբեմն աղաւաղված բառեր, որոնցով մարդ արտայայտում է իր միտքը։ Իսկ հայի ամենօրեայ կեանքում գործադրող այդ բառերը միթէ մի բանալէ կարող է գտնել մեր բառարաններում։ Ամենքը միաբերան պէտք է ասեն.—ոչ։ Ուրեմն եզրակացնենք սրանից, որ բառագիտական հարցը մի անհրաժեշտ հարց է մեր աշխարհիկ լեզուն յառաջ տանելու և ճոխացնելու համար և մենք պէտք է անպատճառ աշխատենք այդ մասին։ Բայց ինչպէս։ Սա մի այնպիսի ծանր պաշտօն և դժուար աշխատութիւն է, որ մի մասնաւոր մարդու, անհատի գործ չէ, այլ մի ընկերութեան, որ մի ամբողջ մարմին կազմած, բաւական մեծ գումարներով կարող է հասնել իր նպատակին։ Որովհետև մենք՝ հայերս սիրտ չունենք և գլխաւորապէս սովոր չենք առանձին գումարներ գոհել, այն էլ մի այնպիսի ընկերութեան, որի բարձր նշանակութիւնը հասկացող շատ քիչերը կը գտնվին, այս պատճառով այդ միջոցը չատ թոյլ է և, համարեա, անիրականելի նպատակին հասցնելու համար։

Մենք այստեղ մի միջոց ենք առաջարկում, որ կարծում ենք չատ նպատակայարմար և թեթև է լինելու, եթէ փոքր ինչ ժամանակի զոհողութիւն և համբերութիւն ունենանք։ Այդ գործը գլուխ տանելու համար անհրաժեշտ և հեշտ միջոց ունեն մեր գաւառական ուսուցիչները։ Ահա ինչպէս։ Թող կենդանաբանութեամբ պարապող ուսուցիչը պատրաստի աշակերտներին, որ նրանցից մէկը կենդանիների, միւսը գեռունեն-